

բորձը է կանգնած, չնայելով որ քրիստոնէական դաւանութեան մէջ պակաս են գիտնական միտք եւ գաղափար եւ բնագիտական մանրամասնութիւններ: Գիտութիւնը մինչեւ այժմ առաջ կգնայ, կանցնէ մի զօրութենից դէպի միւս զօրութիւն, կհասնէ հիանալի բարձրութեան եւ գերազանցութեան, բայց այնու ամենայնիւ նա գեռ եւս հասած չէ այրից ցքէ: Պատմական փորձը ցոյց կտայ, որ այս հանգամանքում գիտնականների եւ փիլիսոփաների խելքին եկած է շատ անգամ, թէ քըրիստոնէութիւնը յետ ընկած է գարից եւ գիտութենից, եւ այլ եւս պիտանի չէ պատմութեան համար, բայց գործով միշտ կերեւի որ քրիստոնէութիւնը գեռ եւս յառաջ է կանգնած գիտութենից, որովհետեւ նորա մէջ է գիտութեան եւ կեանքի այր եւ քէն: Քրիստոնէութիւնը հաստատված է այնպիսի հաստատ վէմի վերայ, որ առաջին գարից ցերջին գարը այդ վէմի դէմ խորտակլած են եւ հերետիկոսներ եւ հալածողներ: բարբարոսներ, գիտութիւններ եւ կրիտիկոսներ: Պ. Դրէպէրը առաջինը չէ եւ ոչ վերջինը: Նորան կարելի է վերջինն ասել միայն աշխատութեան յատկութեան նայելով:

Ա. Վ.

ԲԻՍՈՒԹՈՒՆԻ ԲԵԽԵՌԱԳԻՐ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ,

ՈՐՈՂՑ ՄԷԿ ՄԸՍՆ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆԸ ԿՎԵՐԱԲԵՐՎԱՒ.

(«ԱՐԱՐԱՏ» յուլիս):

Երրորդ սիւնակը կրաղկանայ 14 յօդուածէ եւ ընդ ամենը 92 տող կպարունակէ:

Ա. Դարեհ թագաւորն կըսէ — Այնուհետև Յաքաէն Պարսի զօրքը խըրկեցի Աէշմասըփայի համար. ան զօրքով մեկնեցաւ: Փարսըվահ երկրին մէջ Փամիքափանա քաղաքին մօտ ապստամբներուն հետ պատերազմեց. Որմիզդինձ օգնեց. Որմիզդի օգնութեամբ Աէշմասըփաի զօրքը բոլորովին կոտրեց ապստամբ զօրքը. Քէրմափարա ամսի սկիզբն էր որ այս պատերազմը տեղի ունեցաւ:

Բ. Դարեհ թագաւորն կըսէ — Այնուհետև երկրին ինձ հնազանդեցաւ, և այս է Փարսըվահ մէջ ըրածու:

Գ. Դարեհի թագաւորն կըսէ — Մարքուշ (Փրան մէջ margiana) երկիրն խնձմէ ապստամբեցաւ Փէրատա (Փրան. մէջ ared) անունով մարքուշի անձ մի երկրին մէծ եղաւ: Ետքը ևս Պարսի բնակիչներէն Տարավեշէշ անունով անձ մի, որ Վէշմէրիմա Պէխմէրիի (Bachriana) ծառաներէն էր: Խրկեցի և անոր ըսի — Աղջութեամբ գնա այն երկիրն, որ ինձ չնազանդեր, զարկ: Այնուշետև Տարավեշէշ զօրբով գնաց և մարքուշիներուն հնա պատերազմեց: Որմիզդ ինձ օգնութիւն ըրաւ: Որմիզդի օգնութեամբ իմ զօրբը կոտրեց ապստամբ զօրբը Էթրեաթեա ամսի քսաներորդ օրն էր որ այս պատերազմը տեղի ունեցաւ:

Դ. Դարեհի թագաւորն կըսէ — Այնուշետև երկիրն ինձ չնազանդեցաւ և այս է Պէխմէրիի մէջ ըրածս:

Ե. Դարեհի թագաւորն կըսէ — Վէշեազրար (Կամ Վէշեազտատ) անունով անձ մի, որ Պարս երկրի Խէշմեայ գաւառին մէջ Թազվա քաղաքը կրնակէր: Երկրորդ անգամ վեր ելաւ և Պարս երկրին ըսաւ — Ես Խէրուշի որդի Պարթեան եմ: Պարսի զօրքն, որ ինձմէ հեռի մնացած էր և իւր հայրենիքի մէջ էր անոր կողմն անցաւ, ապստամբեցաւ, և ան Պարսի թագաւոր եղաւ:

Զ. Դարեհի թագաւորն կըսէ Պարսի և Մարտաց զօրքերն, որ իմ հետ էին, անոնց վրայ խրկեցի, և իմ ծառաներէն Արթվարէթ անունով մէկը հրամանատար կարգեցի: Եւրիշ զօրք մի ալ իմ ետևէն Մարաստան գնաց: Արթվարէթ զօրքով Պարսի կողմը գնաց: Երբ Ֆէգհա Պարնի քաղաքներէն մէկը հասաւ Վէշեազրար, որ Պարթեա անունը կը կրէր: Արթվարէթի դէմ ելաւ, պատերազմ ըրին: Որմիզդ ինձ օգնեց: Որմիզդի օգնութեամբ իմ զօրքս Վէշեազրարի զօրբը բոլորովին կոտրեց: Սարսվահրա ամսի տասներկրորդն էր որ այս պատերազմը տեղի ունեցաւ:

Է. Դարեհի թագաւորն կըսէ — Այնուշետև Վէշեազրար իրեն չնազանդ եղող ձիաւորներով Պիշեավարա փախաւ: անկէ զօրքով յետ զառնալով Արթվարէթի հետ պատերազմը տեղի ունեցաւ: Որմիզդ ինձ օգնեց: Որմիզդի օգնութեամբ իմ զօրքը Վէշեազրարի զօրբը կոտրեց: Քէրմափարա ամսի վեցերորդն էր որ այս պատերազմը տեղի ունեցաւ: Վէշեազրար և անոր չնազանդ եղող մեծերն բռնուեցան:

Ը. Դարեհի թագաւորն կըսէ — Այնուշետև Վէշեազրար և անոր չնազանդ եղող մեծերն Պարսի Ավատիտա քաղաքին մէջ .....

Թ. Դարեհի թագաւորն կըսէ — Այն Վէշեազրարն: որ Պարթեա անունը կը կրէր: Հէրվաթիի կողմը զօրք խրկեր էր, Պարսի ժողովուրդէն Վէշվանա անունով մէկի մի վրայ: որ իմ կողմանէ..... անձ մի այն զօրքին հըրամանատար ըրեր էր, և անոնց ըսէր էր — Աղջութեամբ գնացէք: Վէշվանան և այն երկիրն որ Դարեհին չնազանդութիւն կընեն զարկէք: Ետքը Վէշեազրարի զօրբը Վէյվանաի վրա գնաց, Քապիշխանշ բերդին մօտ պատերազմը տեղի ունեցաւ: Որմիզդ ինձ օգնեց: Որմիզդի օգնութեամբ իմ զօրքս ապստամբ զօրբը կոտրեց: Խնմաքա ամսի տասներորդն էր որ

այս պատերազմն եղաւ:

Փ. Դարեհի թագաւորն կըսէ — Ուրիշ անգամ ապստամբներն ժողվուելով Աէյվանափ դէմ պատերազմ ելան. Քէտէչեալա գաւառին մէջ պատերազմ ըրին. Որմիզդի ինձ օգնութիւն ըրաւ. Որմիզդի օգնութեամբ իմ զօրքս բոլորովին կոտրեց ապստամբ զօրքը, Աէնախնա ամսի եօթերորդ օրն էր որ այս պատերազմը տեղի ունեցաւ:

ՓԱ. Դարեհի թագաւորն կըսէ — Այնուչետև այն մարդն, որ Աէնաղարի զօրքի հրամանատարն էր և որ Աէյվանափ դէմ պատերազմ խրկուած էր, ձիւաւորներով փախաւ և գնաց Երշատա բերդի այն կողմն որ Հէրվաթի երկիրն էր. Աէյվանա զօրքով անոր ետևէն գնաց մինչ Նարիաթեա, հոն զան և զօրքի մեծերն բոնեց սպաննեց:

ՓԲ. Դարեհի թագաւորն կըսէ — Այնուչետև երկիրն ինձ հնագանդ եղաւ. այս է Հէրվաթիի մէջ ըրածա:

ՓԳ. Դարեհի թագաւորն կըսէ — Երբ Պարս և Մարաստան էի, Բարիլացիներն իրկին անգամ ինձմէ ապստամբեցան. Նընտիթափ որդի երկըչա (կամ երգչա) անունով Հայ մի, Բարիլոնի Տէհվաեանա գաւառէն վեր ելաւ և սուտ այսպէս ըստաւ — Ես Նապունիթափ որդի Նապուխ Ետրիսէրան եմ: Ետքը Բարիլոն երկիրն ինձմէ ապստամբեցաւ և Երգչափ կողմն անեաւ և ան Բարիլոնն առաւ և Բարիլոնի թագաւորն եղաւ:

ՓԴ. Դարեհի թագաւորն կըսէ — Այնուչետև ես Բարիլոն զօրք իրկեցի և իմ ծառաներէս մարացի Ախտաֆըրա անունով մէկը հրամանատար կարգեցի և անոնց ըսի — Ողջութեամբ գնացէք. Բարիլոն երկրէն ով որ ինձ չշնազաներ զարկէք. Ախտաֆրան զօրքով Բարիլոն գնաց. Որմիզդի ինձ օգնեց. Որմիզդի օգնութեամբ իմ զօրքս ապստամբ զօրքը զարկաւ. Ախտաֆրա Բարիլոնն առաւ . . . ամսի երկրորդն էր. (Ետքի երեք տողն աւրուած է և վերջին տողը գրուած է) սպանուեցաւ:

Զարդարդ սիւնակը կրագկանայ 19 յօդուածէ եւ ընդ ամենը 92 տող կպարունակէ:

Ա. Դարեհի թագաւորն կըսէ — Այս է Բարիլոնի մէջ ըրած զործա:

Բ. Ըրածս այս է. Որմիզդի օգնութեամբ ամեն բան ըրի. այն ատենն որ երկիրներն ինձմէ ապստամբեցան 19 պատերազմ ըրի, Որմիզդի օգնութեամբ զանոնք զարկի. և 9 թագաւոր գերի ըրի — մէկը Մաքացի Քէմաթան, որ ստախօս էր և ըսեր էր — Ես Խէրուշի որդի Պարթեան եմ, և Պարսն ապստամբեցրեր էր. մէկը Օվճէչէցի Եթրենան, որ սուտ ըսեր էր — Ես Օվճէչէի թագաւորն եմ, և Օվճէչէն ինձմէ ապստամբեցրեր էր. մէկը Բարիլացի Նէթի Պէթիրան, որ ստախօս էր և այսպէս ըսեր էր — Նապուխ Ետրիսէրան եմ. Ետքը Նէպու Նիթա Բարիլոնն ապստամբեցրաւ. մէկը պարսացի Մարթեան, որ սուտ ըսեր էր — Ես Աւմանըն եմ Օվճէչէի թագաւորն և Օվճէչէն ինձմէ ապստամբեցրաւ, և մէկը Մարաստանի ժողովուրդէն Քէրագարէթչէն, որ ըսեր էր — Ես Ավքէշթէրէչի ցեղէն Շա-

սէրթիան եմ, և Մարաց երկիրն ապստամբեցրաւ. մէկն Էսքարթիաի ժողովուրդէն Զէթրաթէխման, որ սուտ ըսեր էր—ես Ովքէշէրէչի սերունդէն Էսքարթիաի թագաւորն եմ և Էսքարթիան ապստամբեցրաւ. մէկը Մարքուա ժողովուրդէն Քէրատան, որ սուտ ըսեր էր—ես Մարքուաի թագաւորն եմ և Մարքուան ապստամբեցրաւ. մէկը Աշէչեազզար Պարսի ժողովուրդէն որ սուտ ըսեր էր—ես Խէրուշի որդի Պարթեան եմ և Պարսի ապստամբեցրաւ. մէկն Էրդչա Հայաստանի ժողովուրդէն, որ սուտ ըսեր էր—ես Նէպու Նիթաի որդի Նասուին Էտրինէրան եմ և Բարիլոնն ապստամբեցրաւ:

Դ. Դարեհ թագաւորն կըսէ—Այս պատերազմերուն մէջ այս ինն թագաւորը գերի ըրի:

Ե. (Աւոն աւրուած է):

Ե. Դարեհ թագաւորն կըսէ—Ով զու, որ ինձմէ Ետքը թագաւոր պիտի ըլլաս, աշխատէ որ երբէք ստախօսութիւնը թղլ շտաս, և այն մարդն, որ հաւատէ զուրս կելլէ, լաւ պատժես. ելձէ երկիրն այսպէս պահուի խաղաղ կմնայ:

Զ. Դարեհ թագաւորն կըսէ—Այս է իմ ըրածս. Որմիզզի օգնութեամբ տեսն ըան ի գործ զրի. ով զու, ով որ ըլլաս, որ այս տախտակը կկարգաս, քեզ յայտնի ըլլայ որ այս տախտակին վրայ գծազրածներս սուտ շարձանազրուեցան:

Ե. Դարեհ թագաւորն կըսէ—Որմիզզի իմ վկաս է, որ այս պատմութեան բոլոր զէպքերն ճշմարտութեամբ գրեցի:

Ը. Դարեհ թագաւորն կըսէ—Որմիզզի օգնութեամբ շատ ուրիշ բաներ ըրեր եմ, որոնք այս տախտակին վրայ չարձանազրուեցան, այն պատճառով որ շըլլայ թէ անոնք, որ ինձմէ Ետքը այս տախտակը կկարգան, ուրիշ տեղ ըրած գործերս սուտ համարեն:

Թ. (Աւ պարզ չէ).

Փ. Դարեհ թագաւորն կըսէ—Ով զու, որ իմ տեղակալը պիտի ըլլաս իմացիր որ ես այս գործերս հրատարակեցի այն պատճառով որ զու զանոնք չծածկես, ելձէ զու այս տախտակը ժամանակին աշխարհի մէջ հրատարակես. Որմիզզի քեզ օգնական կը լսայ, քո որդիներն շատ կը լսան և և կեանք երկար կտել:

ՓԱ. Դարեհ թագաւորն կըսէ—Եթէ զու այս պատմութիւնը ծածկես, քո անունն աշխարհիս մէջ չմնար, և Որմիզզի քեզ թշնամութիւն կընէ, և անորդի կը լսաս:

ՓԲ. Դարեհ թագաւորն կըսէ—Որմիզզի օգնութեամբ ըրածս այս է, և Որմիզզ ու (բարի) հրեշտակներն են որ ինձ օգնեցին:

ՓԳ. Դարեհ թագաւորն կըսէ—Այս պատճառով Որմիզզ և (բարի) հրեշտակներն ինձ չնորհ ըրին, որ հաւատէ զուրս չելայ և ստախօս չեղայ և ընութիւն ըլլիքի:

ՓԴ. Դարեհ թագաւորն կըսէ—Ով զու, որ ինձմէ Ետքը թագաւոր պի-

տի ըլլաս, ով որ ստախօս ու մեղագործէ, զան մի՛ սնուցաներ և զան տապալէ:

**ԺԵ.** Դարեհի թագաւորն կըսէ—Ովլ դու, որ ինձմէ ետքը կկարդաս այս տախտակն որ գրեցի և կտեսնես այս պատկերներն որ քաշեցի, զգուշացիք զանոնք անպատռելէ, և եթէ զանոնք պահպանես, դուն ալ խաղաղութեամբ կապրիս:

**ԺԶ.** Դարեհի թագաւորն կըսէ—Ովլ դու, որ այս տախտակն ու պատկերներն կտեսնես, եթէ զանոնք պահպանես, Որմիզդ քեզ օգնական ըլլայ և քո որդիներն չատ ըլլան և կեանքդ երկար ըլլայ և ինչ որ քնես Որմիզդ քեզ յաջողութիւն տայ:

**ԺԷ.** Դարեհի թագաւորն կըսէ—Եթէ այս տախտակն ու պատկերներն տեսնես ու չպահպանես և զանոնք անպատռես, Որմիզդ քո թշնամին ըլլայ և քո որդիներն չապրին և ինչ որ քնես Որմիզդ այն գործը խափանէ:

**ԺԸ.** Դարեհի թագաւորն կըսէ—Ասոնք են որ ինձ հետ էին, երբ Պարթեան անուն կրող Մաքացի Քէմաթան սպանեցին իմ Նիզակակիցներս էին, և ասոնք միայն ինձ հետ էին — Պարսի ժողովուրդէն Արտաֆրա անունով մէկը, Պարսի ժողովուրդէն Աթանասիակի անունով մէկը, Պարսի ժողովուրդէն Վարտէհունիակի որդի Քէպրավա անունով մէկը, Պարսի ժողովուրդէն Զէփաւրաի որդի Մէքապէկսէլա անունով մէկը, Պարսի ժողովուրդէն Եսփասինա անունով մէկը:

**ԺԹ.** (Կարդալ չըլլար):

Հինգերորդ սիւնակը կարդալ չըլլար:

Պատկերներուն մօտ գրուած է արձանագրութիւններու թարգմանութիւնը:

**Ա.** Դարեհի գլուխի վերն 18 տող գրուած էն որոնք բառ առ բառ նոյն են առաջին սիւնակի սկզբի շորս յօգուածին հետ:

**Բ.** Դարեհի ոտքերուն տակ պառկած մարդի պատկերին տակ գրուած է.

**Ա.Յ.** Մաքացի Քէմաթան ստախօսն է, որ ըսեր էր — ես Խէրուշի որդի Պարթեան եմ:

**Գ.** Դարեհի առջեր կանգնած առաջին անձին մօտ գրուած է. «Ա.Յ» Եթքենա ստախօսն է, որ ըսեր էր — ես Ավճէչէի թագաւորն եմ»:

**Դ.** Երկրորդ անձի կողմը գրուած է. «Ա.Յ» Խէթի Պէթիրա ստախօսն է, որ ըսեր էր — ես Նէպու Նիթաի որդի Նապուխ Էտրիսէրան եմ»:

**Ե.** Երրորդ մարդի մարմնին վրայ գրուած է. «Ա.Յ» Քէրալարէլմշէ ստախօսն է, որ ըսեր էր — ես Ավքէշմէրէհի որդի Շասէրթիան եմ և Մարտանի թագաւորն եմ»:

**Զ.** Չորրորդ անձի վերն գրուած է. «Ա.Յ» Մարթեա ստախօսն է, որ ըսեր էր — ես Ավճէչէի թագաւոր Ռւմանըշն եմ»:

**Է.** Հինգերորդի կողքը գրուած է. «Ա.Յ» Զէթքաթէխմա ստախօսն է, որ ըսեր էր — ես Ավքէշմէրէհի սերունդէն եմ և Ասքարթիաի թագաւորն.

**Ը.** Վեցերորդի կողքը գրուած է. «Ա.Յ» Վէհչէսպար ստախօսն է, որ

ըսեր էր — ևս Խէրուչի որդի Պարթևան եմ : Յա աօքառս որ կա առաջ պատճեն  
թ. Եօմերորդի մօտ զրուած է . «Այս Էրգչան է , որ սուտ ըսեր էր :  
ևս Նէպու Դիթահի որդի Դապուխ Էտրիսկրան եմ և Բարիլոնի թագաւորն :  
Ժ. Ալմերորդի վերն զրուած է . «Այս Քէրատատ ստահրօնն է , որ ըսեր էր  
— ևս Մարրանան եմ : »

ԺԱ. ԱՆԻՐՋԻՆԻ մօտ, որ երկայն զլիսարկ ունի, գրուած է. «ԱՅս Սարգիհան Սաքան է»:

Կիւրոս մեր Տիգրան առաջինին ժամանակակից ըլլալով՝ Դարեհ առաջինն ալ Վահագնին ժամանակակից կը լլայ, Ազգային պատմագիրներն ու երգիշներն Վահագնի քաջութիւններն գովելով ու երգելով հանդերձ, ամենենին չեն ըսեր որպիսի քաջութիւններ էին անոր ըրածներն։ Օտարազգի պատմիչներն ևս թէև Դարեհի ըրածներու շատերն մանրամասնարար կպատմեն, սակայն անոնք ալ բառ մի անգամ չեն ըսեր Հայերու հետ ըրած պատերազմներուն վրայ։ Աւստի այս արձանագրութիւններն, որոնց ամբողջ ընթերցան ութիւնն ու մեկնութիւնն եթէ ճշգրիտ կամ ճշգրտանման համարենք, ոչ միայն Հայերու, իր ազգի մի այն ատենուան ունեցած զօրութեան վրայ մեզ բաւական տեղեկութիւն կհաղորդեն, այլ և Վահագնի գործած քաջութիւններն, որու դէմ ըլլալն գուշակել կտան, և նաև Խորենացու Տիգրան առաջինի վրայ պատմածը մասամբ իւիք կհաստատեն ընդգէմ Քսենոփոնի որ բոլորովին հակառակ պատմութիւն մի կդնէ.

Արդ որպէս զի այս երկու պատմագիրներու պատմածներուն մէջ եղած տարբերութիւնն աղեկ տեսնուի, և վերը դրուած արձանագրութիւններու կարևորութիւնն ըմբռնուի, հարկ կհամարիմ Խորենացու պատմածը խիստ համառօտարար յիշել և Քսենոփոնինինն Եփրեմ Զազըճեանի Պատմութիւն Հայոց գիրքէն առնելով հօս զնել, և ետքինիս վրայ քանի մի դիտողութիւններ ընելէն ետքը անցնել արձանագրութիւններու այն յօդուածներուն, որ Հայերուն կմիրարերին:

Խորենացին Տիգրան առաջինի Ախորոսին աջակեց Ըլլալն, անոր հետ Խիստ մտերմութիւն ունենալն, Յոյներն (հաւանականաբար փոքր Ասիայի Յոյներն ըսել կուղէ) Նուաճելն յիշելէ և Տիգրան ամեն կողմէ մեծապէս գովելէ ետքը իւր սովորութենէն դուքս մանրամասնութեամբ կպատմէ Մարաց թագաւոր Աժգահակի զգացած կասկածն ու երկիւղը, նիւթած դաւը, Տիգրանի ըրած պատերազմը, Աժգահակ սպանելն, ստացած փառաւոր յաղթութիւնն և Հայաստան բերած Մարացի գերիներն:

Իսկ Քսենոփոն ասոր հակառակ պատմութիւն մի կընէ հետեւալ կերպով. — «Երուանդ Տիգրանին հայրն, կըսէ, Աժդահակին հետ պատերազմ ըրած ու յաղթուած ըլլալով անոր տուրք տալու և պատերազմի առեն զօրբով օգնելու խոստում ըրած էր. Բայց Աժդահակին մահուանէն ետքը, անոր Ամաքսար որդւոյն թագաւորութեան ժամանակը, երբ որ Բարիլացւոց թագաւորն ամեն կողմէն Մարաց տէրութիւնը կնեղէր, Հայոց թագաւորը յարմար աօիթ դտաւ. և տուրք ու զօրք տալու դազրեցուց. Ասկէ ետքը

պատմութիւնը այսպէս յառաջ կտանի. Կիաքսար Քարիլացւոց դէմ պատերազմի ելելու պատրաստութիւն տեսնելով, Կիւրոսն իւր քրոջ որդին իւր բանակին զօրագետ զրաւ, Ասիկայ երբոր Պարսից զօրբով Կիաքսարին մօտ եկաւ և իմացաւ որ Հայոց թագաւորը հարկ ու զօրք տալը դադրեցուցեր է, թագաւորէն ինպրեց որ ինքը անոր վերայ խաւրէ, խոստանալով որ առանց գժուարութեան անիկայ իրեն առաջինէն աւելի հաւատարիմ բարեկամ կընէ: Կիաքսար աս բանիս հաւանածին պէս Կիւրոս զօրքին կէսպ Քրիսանտաս զօրապետին հետ Հայաստանին ան լերան վրայ խաւրեց, որ Հայոց թագաւորը զրսէն իւր վերայ թշնամի յարձակած ատեն իւր ընտանիքով ու գանձովը կիախչեր կապաւ ինէր, և պատուիրեց որ անտառներուն մէջ պահուըտի ու քանի մի պղտիկ խմբեր խաւրէ, որոնք աւազակաց պէս պատահած մարդիկներուն վրայ յարձակին և վախցրնելով փախցնեն. որպէս զի հոն զօրք կեցած ըլլալը Հայոց թագաւորը չիմանայ, իսկ ինքը զօրաց մասցած մասն առած Հայաստանին սահմանն եկաւ. իբրև թէ որս կուզէր ընել, ինչպէս շատ անգամ ըրած էր, և անմիջապէս երուանդին դեսպան իրկեց, պահանջելով որ շուտով հարկն ու զօրքն հետն առած իւր մօտ դայ: Հայոց թագաւորն այս յանկարծական գէպքէն զարհուրած, իւր ընտանիքն ու պղտիկ որդին լերանց վերայ իրկեց, և ինքն սկսաւ զօրքը պատրաստել. բայց լսելով որ Կիւրոս մօտեցեր է, ամեն բան թող տուաւ և քիչ մարդով բլրի մի վրայ փախաւ. իսկ իւր ընտանիքն ու որդին լերան վրայ ելելնուն պէս Քրիսանտասին զօրաց ձեռքն ինկան, Կիւրոս ան ատեն երուանդին փախած բլուրը պաշարեց և անոր իմաց ըրաւ որ վար իջնայ ու պարապ տեղ սովէն ու ծարաւէն չնեղուի: Թագաւորն որովհետեւ ուրիշ աղատելու ձար մը չունէր բլրէն իջաւ ու Կիւրոսին մօտ եկաւ: Դոյն ժամանակը Տիգրան իւր երեց որդին, որն որ ուրիշ տեղ մի զացած էր, հոն հասաւ, և հայրն ու բոլոր թագաւորական ընտանիքը գերութեան մէջ տեսնելով սկսաւ լալ և ողբալ. իսկ Կիւրոս անիկայ տեսածին պէս. « Աղէկ ատեն եկար, ըսաւ, որ հօրդ վրայ ըլլալու գատաստանը լսես »:

Ասկէ ետքը Պարսից, Մարաց և Հայոց իշխանները ժողվեց, Նաև Երուանդին ընտանիքն ալ կանչեց, և երբոր ամենն եկան, սկսաւ Հայոց թագաւորին հետ այսպէս խօսել. Նաև քեզ իրատ կուտամ որ, ըսաւ, դատաստանի մէջ սուտ չխօսիս, վասն զի ստութիւնը յանցաւորը գթութեան անարժան կընէ: Որուն Հայոց թագաւորը պատասխան տուաւ. Ինչ որ կուզես հարցուր, ես քեզ ճշմարիտը կըսեմ, թող ճշմարտութեան համար ինչ որ ըլլայ ըլլայ: Ան ատեն Կիւրոս սկսաւ հարցնել, Դուն իմ մօրս հօրն Աժգահակին հետ պատերազմ չօրի՞ր և անկէ յաղթուելով հարկ ու զօրք տալ չխոստացա՞ր, արդ հիմա ի՞նչու հարկը չես վճարեր և զօրք չես տար: Ազատութեան բաղձացի, ըսաւ Հայը: Ուրեմն, ըսաւ Կիւրոս, ծառայ չըլլալու համար պէտք է կռուել: Բայց գուն ըսէ ինձ, թէ որ քո իշխաններէդ մէկը յանցանք մի ընելու ըլլայ, անիկայ իւր իշխանութեան մէջ թող կուտաս, թէ անոր տեղ ուրիշ մի կզնես. և թէ որ անիկայ շատ

ստացուած ռւնենայ, իրեն կթողուս որ անոնք վայելէ, թէ ձեռքէն կառ-  
նուս: Եշխանութենէ կշանեմ, պատասխանեց, և ամեն ինչքերը կառնում:  
Խոկ եթէ իմանալու ըլլաս որ քեզ դէմ ապստամբեր և թշնամւոյն կողմն  
անցեր է, ի՞նչ կընեմ: Կրոնեմ կսպանեմ, ըստ թագաւորը: Աս խօսքերը  
լսելով Նրուանդին ընտանիքն սկսան լալ և վայնասուն մի հանել, սույգ  
համարելով որ թագաւորն այսպէս իւր բերնով իւր մահապարտ ըլլալուն  
վճիռը տալով թէ ինքն և թէ իրենք պիտի որ սպանուին: Կիւրոս անոնց  
հրամայեց որ լոեն: և նորէն թագաւորին գառնալով, թող քո իրաւունքդ  
այնպէս ըլլայ, ըստ, բայց ինձ ինչ խրատ կուտաս: սպանել թէ ազատել  
Նրը որ թագաւորը տարակուսած լուս ու պապանձեալ կեցաւ և չէր գի-  
տեր որ ինչ պատասխան տայ: Տիգրան մէջ մտնելով ցուցուց Կիւրոսին  
որ եթէ իւր հայրն սպանելու ըլլայ, Մարաց տէրութեան մեծ վեաս կհաս-  
ցնէ: ասոր հակառակ թէ որ անոր շնորհք ընէ, զինքը կվաստկի և անկէ  
ետեւ իրեն ու թագաւորութեան մշտնջենաւոր հաւատարիմ դաշնակիցն ու  
օգնականը կլլայ: Կիւրոս որ արդէն աս բանիս կրաղձար, Տիգրանին այս  
խօսքերը բաւական երաշխաւորութիւն համարեցաւ ու հայոց թագաւորն  
աղատ թողուց, միայն անկէ 1500 տաղանդ և 24,000 զօրք առաւ, որոնց  
զօրավար Տիգրանն եղաւ: (Քսենոփոն, Կիւրոսի Խրատ, Գիրք Բ. դլ. 4 և  
Գիրք Դ. դլ. 1-3):

Թողնելով ազգային պատմագիրներէ հանուած ու հանուելիք ապացոյշ-ներն Քսենոփոնի մեր Երուանդի ու Տիգրան առաջինի վրայ պատմածի ան-ստուգութիւնը հաստատելու համար, նախ կուզեմ հոս յառաջ բերել Աւլիիմ Սմիթի ըրած խոչական դիտողութիւնը Քսենոփոնի Կիւրոսի Խրատ գրքին նկատմամբ։ Այս պատմագիրն Քսենոփոնի կենսագրութիւնը համառօտարար ընկելէ և անոր իւրաքանչիւր զրական գործի արժանիքը զատ զատ յիշելէ ետքը այսպէս կշարունակէ իւր խօսքը։ Կիրոպէզահան (Կիւրոսի Խրատ), կըսէ, Քսենոփոնի ամենէն աւելի զուարձական ու ժո-ղովրդահաճ գործքերէն մէկը, կդաւանէ պարսկական պետութեան հիմնիչ Կիւրոսի պատմութիւնն ըլլալ։ բայց իրականօրէն տեսակ մի աշխարհա-վարական վիպասանութիւն մի է և չժառանգեր իրը պատմական գործը որ և է հեղինակութիւն։ Հեղինակի դիտաւորութիւնը կմուի եղեր է կատարեալ տերութեան մի պատկերն գծել և թէեւ տեսարանը Պարսկաստանի մէջ դրուեր է, սակայն գործքի նիւթերն նոյն խէկ իւր փիլիսոփայական գաղա-փարներէն և Սպարտայի սովորութիւններէն ելուզուած են և պատուա-տուած են Կիւրոսի նկատմամբ հասարակ եղած ժողովրդահաճ վէպերուն վրայ \*):

Եւ յիրաւի վերն առաջ բերուած Քսենոփոնի մեր Խրուանդի ու Տիգրանին վրայ ըրած պատմութիւնն աւելի թատրոնական կտորի մի կնմանիւ

(\*) See History of Greece, By William Smith, LL.D. Chap. 445.

սյնքան դէպքերն յանկարծական ու զուգաղեց են, քան թէ լուրջ պատմութեան մի: Ուշադրութեամբ այն կարգացած ատենը պէտքէ կամ երուանդ ու Տիգրան փոքր իշխաններ կամ լաւ ևս Տէրեկէնէր և իրենց իշխած երկիրն Հայաստանն ալ Տէրեկէնէր մի համարել և կամ Քսենոփոնի պատման անստոյդ: Ենք կրնար երուանդ ու Տիգրան Տէրեկէնէր համարել քանզի ոչ միայն աղգային պատմութիւնն ասոր հակառակ կպատմէ: այլ նաև նոյն իսկ յոյն պատմագրի խօսքերն այդ կարծիքին դէմ կելլեն երբ կըսէ թէ Միայն անկէ (Երուանդէն) 1500 տաղանդ և 24000 զօրք առաւ Արդ նախ Տէրեկէյու մի կարողութենէն մեծապէս վեր կըլլայ 24000 զօրք իւր իշխանութենէն զուրս հեռաւոր երկիր մի ուրիշն օգնականութեան խրկել: անտարակոյս պարտաւոր ըլլալով այդ թիւի կրկինն իւր երկրին մէջ պաշելու: Երկրորդ իւր հարկ վճարուած 1500 տաղանդն, որ ևթէ արձամի համարենք ութ ու կէս միլիոն և եթէ ոսկի ութուունչինդ միլիոն ֆրանք կընէն խօստ ահագին գումար մի է, նկատողութեան առնելով այն ատենուանց այսինքն առկէ 2450 տարի առաջուան, երկրիս դրամական զիջակն և ստակի ունեցած արժէքը, գումար մի, որ արդի միլիարի մի (1000 միլիոն) արժէքն ու զօրութիւնը կունենայ, և որ փոքրիկ իշխանութիւն մի և մինչ անդամ փոքրիկ թագաւորութիւն մի այդշափ գումարն իւր հարկ վճարելն ոչ երբէք կրնայ: Բայց եթէ Հայաստանը մեծ երկիր մի և այդշափ հարկ վճարելու կարող համարենք, այն ատեն ի՞նչպէս կրնան պարզաբանուիլ այն խօսքերն թէ Կիւրոս զօրքին կէսը Քրիստոնու զօրապետին հետ Հայաստանին ան լերան վրայ խաւրեց: ուր Հայոց թագաւորն զրակն իւր վրայ թշնամի յարձակած ատեն (իւր թէ աւազակապետ մի ըլլար), իւր ընտանիքովն ու գանձովը կփախչէր կապաւինէր: Ո՞ւր զնելու է այդ ապաւէն լեռն—անշուշտ ոչ Հայաստանի սահմանագլուխներուն մօտ: քանզի այն ատեն ապաստանարան չէր կրնար ըլլալ, այլ յաւետ Հայաստանի կամ թագաւորութեան կենտրոնին մօտ տեղ մի: Ուրեմն ի՞նչպէս կրնար Քրիստոնու բանակով մի, որ Կիւրոսի զօրքի կէսն էր, Հայաստանի մէջէն առանց ուկէ դժուարութեան կամ մանր կորիւներ ընելու այնպէս անցնել և մերձենալ այն լեռին որ թագաւորն չլսէր և Կիւրոսի մերձենալէն յանկարծակի գար և զարհութելով ոչինչ չկարենար ընել, բայց միայն քանի մի մարդով բլուրի մի ծայրն փախչել ապաւինիլ: Ասոր անհաւանական ըլլալն անշափս կդառնայ, երբ յիշուի որ Երուանդ, իւր նորոգ ապատամբած մէկը, միշտ արթուն ու պատրաստ պէտք էր որ ըլլար:

Արդ գամ՝ արձանազրութիւններուն. —

Դարեւէ ինչպէս կտեսնուի այս արձանազրութիւններէն իրեն դէմ պատերազմողներու ամենքն ալ ապաստամբ կանուանէ, ամեն պատերազմներուն մէջ յաղթական կելլէ—Արմիզզի օգնութեամբ իմ զօրքս ապստամբ զօրքը կոտրեց ըսելով: Սակայն պատմութիւնը, զիւաւորապէս յունական աղքիւրէ ասոր միշտ յաղթական ըլլալը չհաստատէր, բայց կըսէ թէ Ակիւթացոց վրայ յարձակած ատենն ոչ միայն կամակոր ու զրեթէ յաղ-

ժուած ետ դարձաւ, այլ քիչ մնաց որ իւր բոլոր զօրքը ջնջուէր։ Եթէ Քարեհի պատմութիւնը զանազան ու ժամանակակից պատմաբաններէ աւանդուած ըլլար, այն ատեն զիւրին կըլլար հեղինակութիւններու բաղդատմամբ ճշմարտութեան մօտենալ կամ հասնել, սակայն գրականութեան ծաղկելն առաջ տեղի ունեցած ամեն գէպքերու պատմութեանը նման Քարեհին ալ, որ կասկածներէ ու հակասութիւններէ բոլորովին անզերծ չէ, պէտք է մեծ զգուշութեամբ և անվստահութեամբ ընդունիլ։ Աւտի անոր նկատմամբ պատմուածներուն միջէն հաւանականութիւնը կամ հաւանական ճշմարտութիւնը միայն կրնայ գուշակուիլ և ոչ հաստատութեամբ ցուցուիլ։ Քարեհի յաղթութիւնն անտարակցյա համարելու է այն պատերազմներուն մէջ երս որ կրսէ թէ—ապստամբ թագաւորն կամ պետը բռնեցի—և բռնածներու պատկերներն ալ արձանագրութիւններուն մօտ գծել տուեր է։

Հայերու հետ ըրած պատերազմներուն դալով, որոնք մեզ համար ամենէն աւելի կարեւորութիւն ունին, դիտողութեան արժանի հինգ գլխաւոր կէտեր կան։

Առաջին, Քարեհի մեծ ու զօրաւոր համարուած ազգերու հետ, ինչպէս Քարիլացիներու, Մարերու և այլն, միայն մէկ կամ երկու պատերազմով գործը կլմնցնէ, իսկ Հայերու հետ հինգ մեծ պատերազմ կընէ։

Երկրորդ, Հայերու դէմ նախ Տարավէշէց անունով Հայ մի կիրկէ, որն իւր հրամանատարներէն մէկը կամ պերճ կանուանէ և ետքէն Պարսիկ մի Աօմսա անունով։ Ի՞նչպէս բացատրելու է Հայերու դէմ պերճ Հայ մի իրկեն։ Եթէ ոչ կարծելով որ այս Հայն իւր թագաւորին դէմ ապստամբածնախարար մի եղած պիտի ըլլայ, և հետեւագէս օգնութեան համար Քարեհին զիմած, և Քարեհի ալ իրեն զօրք տալով Հայաստան խրկած է, որ չկրնալով բան մի ընել կամ լաւ ևս յաղթուելով, Քարեհի պարտաւորված է ուրիշ անգամ զօրք խրկել Պարսիկ մեծի մի հրամանատարութեան ներբյա։

Իսկ եթէ Տարավէշէց Հայերուն յաղթած և անոնք նուաճած ըլլար, ի՞նչ հարկ կար Պարսիկ մի հրամանատարութեամբ նոր զօրք խրկելու։

Երրորդ, պատերազմներն այլև այլ տեղեր կըլլան, և չորրորդ—պատերազմը որ Աօմսա առաջին անգամ կընէ Հայաստանէն գուրս և Ասորեստանի գաւառներէն մէկին մէջ տեղի կունենայ, Ասկէ կրնանք մակաբերել որ Տարավէշէց յաղթուած ըլլալով, Հայերն Հայաստանէն դուրս Ասորեստանի գաւառներէն մէկն արշաւած ըլլալու են, որ Քարեհի պարտաւորուած Աօմսան նոր զօրքով անոնց դէմ խրկեր է, և ասոր համար է որ պատերազմն Ասորեստանի մէջ տեղի կունենայ, և հինգերորդ—պատերազմը գարձեալ Հայաստանին մէջ կըլլայ, բայց յիշուած տեղի անունը կարելի չէ մեզ ծանօթ անուններէն մէկին վստահութեամբ յատկացնել։

Չորրորդ, Հայաստանի թագաւորի և կամ ապստամբապետի ոչ պատկերն իբր զերի արձանագրութիւններու մէջ քաշուած է և ոչ ալ գերի

բոնուիլը, քիթի ու ականջներու կտրուիլն և կամ սպանուիլը յիշուած է. ինչպէս քանից անգամ Պարեհէն պարծանքով յիշուած են Մաքացի Քէմաթաինը և ուրիշներունը: Եթէ Հայերու վրայ տարած յաղթութիւններն ճշմարիտ ըլլային, տարօրինակ բան մի պիտի ըլլար որ այնշափ պատերազմներէ ետքը անսոնց թագաւորն կամ ապստամբապետը ըսոնուէր կամ գէթ սպանուիլը չյիշուէր:

Հինգերորդ. Նկատողութեան արժանի է որ Բարիլոնի Տէչվաեանա գաւառէն Հայ մի վեր կելլէ Բարիլաստանը կապստամբեցնէ, Բարիլոն քաղաքը կառնէ և Բարիլոնին թագաւոր կըլլայ, և ետքէն Պարեհէն յաղթուելով կրոնուի ու կսպանուի:

Այս յօդուածը բացատրելու համար պէտք է— կամ կարծել որ Բարիլոնի այս գաւառը Հայերու իշխանութեան տակն էր, և անոր պետը կամ կուսակալը Հայստանի թագաւորէն զրդուելով և զօրքով ու ստակով օգնուելով կյածողի Բարիլաստանը Պարեհէն ապստամբեցնել, մայրաքաղաքն առնել և թագաւոր դառնալ. և կամ Էրդչան Հայերու թագաւորէն իրկուած զօրապետ մի էր որ Տէչվաեանա գաւառին տիրելով և անակնկալ յաջողութիւններ ունենալով յաջողեր էր Բարիլաստանի միւս գաւառներն ալ ոտքի հանել ու Բարիլոն քաղաքն առնել: Բայց եթէ այս երկու կարծիքներն անհաւանական երեխն և պնդուի որ Հայերն իրենք արդէն նուաձուած ու Պարեհին հպատակ էին. այն ատեն պիտի հարցուի միթէ հաւանական է որ սոսկ հայ մի օտար երկրի մի մէջ միայն ևս այն ինչն եմ՝ բաելով յաջողի ամբողջ երկիրն ապստամբեցնել իւր թագաւորին դէմ, այն երկրին տիրել և ինքզինքը թագաւոր հրատարակել: Այսպիսի բան մի հաւանական կարծելն ըստ ինձ անհեթեթութեան ծայրն կըլլայ:

Որ ինչ այս արձանագրութիւններէ կրնանք հետեցնել այն է—որ Հայաստան Պարեհի ատենն ընդարձակ երկիր մի և Հայերն ալ մեծ զօրաւոր ու անկախ ազգ մի պիտի եղած ըլլան, և պատմագրական ուրիշ ամեն պարագաներն աղեկ կշռելով եզրակացնել, որ Քսենոփոնի մեր Երուանդի ու Տիգրանի վրայ ըրած պատմութիւնը բոլորովին անստոյգ և կամ ուրիշ բան չէ, եթէ ոչ զուարձական վէպ մի ինչպէս ալ արդի պատմադէններն կհակին նկատել անոր Կիւրասի Խրատ ամբողջ գիրքը:

Ն. ԳՕՐԾԵԱՆ:

ԻՄ ՍԼՅ.

Արդիմիներին է Աստուծու  
արքայութիւնը (Յուկ. Ճ. 46):

Կոիրեմ հանգել սրտով և հօգով

Փոքր մանուկների ընկերութեան մէջ,

Կոիրեմ ևս միշտ նայել վայելել

Նոցա կենդանի և ուրախ խաղեր:

Կոիրեմ նոցա անմասն խօսքին,

Երբե սոխակի երգին, ականջ դնել: